

Պիտ' ուզէի յաւիլ ես' անջրպետէն այդ մեծին ,
 Կարօտակէզ , խուզարկու աչքերով' այն կարճատեւ
 Վայրին վերայ , ուր տեսայ պայծառ աչքը աւօտին ,
 Որ իմ խոնարհի հիւղակիս ոսկեժպիտ տար բարեւ ,
 Եւ հրանոյքն որ թեւածէր զըւարթ կեանքիս իմ վերեւ :
 Այն տեղն հիմա կերեւնայ հիւլէի մը չափ չնչին ,
 Պահ մ'ալ , ահա' , կ'անհետի : Անոր ստուերն իսկ թեթեւ
 Աչքերս այլեւս չեն զատեր' մէջն աւերմանց մութ շեղջին
 Աշխարհներու' քանդուած հրամանովն Արարչին :

Ժամանակ—լա՛ւ , ժամանակն ի՞նչ կարժէ քովդ , եմէ ոչ
 Լոկ խորհուրդ մը սըլացիկ , դարերու քով բերաւոր ,
 Արեւներու անհամար քով իբրեւ լոյս մը դողդոջ ,
 Անհունութեան ոստանին սոսկ մէկ թելը նրբուր ,
 Ու կամ խից մը , որ կ'ուզէ կշռել աշխարհը բոլոր :
 Իր էութիւնն , անունն իսկ , դարձեր է այժմ անծանօթ ,
 Պուլ տըւած է զայն ալիքդ , ու փաթեթըւած ջուրջն անոր
 Գարեբու մութ վերարկուդ' նսեմութեան մէջ աղօտ :
 Ժամանակ—լա՛ւ , ժամանակն ի՞նչ կ'արժէ որ քեզի մօտ :

Պոսթոն

Տ. Մ. ԱՐՇԱԿ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ֆարմանի Ասմանի

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ց

Տրեւիթի ԿՍԻՆԻՔ

Համբաւ ելաւ սպաննան Փօլսիսն , եւ կոչի
 զՅարման մանուկն քաղաւորն , եւ արկանե զնա
 ի բանս , զի մի յանկարծակի սպանցեան ընկե-
 րակիցն Փօլսիսն :

Վաղիւն ելան տեսան զՓօլստն ըսպանած ,
 Ի մէջ ճանապարհին եւ ջարեցուցած
 Եղեւ խրոսովութիւն ի մէջ դիւերոաց ,
 Զի էր նա զլիաւոր շատ արանք քաջաց :

(fol.63) Զարմանան(1) եւ ասեն՝ Բաշս ո՛վ յաղ-
 թեւ է ,

Կամ առիւծիս առիւծ ո՛վ հանդիպել է .
 Ով զգորա(2) զօրութիւն ոչինչ տեսաւ չէ .
 Անյաղթ ուժ նա ունէր որ զգա ձրգել է :

Երթան թաղաւորին այնն լրանի ,
 Թէ քո քաջ պահաւան Փօլստն ի Հընդի
 Գլտաք ըզնա սպանած ի յանկարծակի ,
 Զգիտնք թ'ինչ հանդիպել ի յայս գիշերի :

Ասան թաղաւորին՝ Բաշս ո՛վ աղթել է ,
 Թէ ոչ Ֆարմանն է որ զուժըն տեսել է .
 Տրեւիթի մեծ թաղաւորն զմանուկն կոչէ ,
 Նա ճարտար ընկերօքն առ ինքն հասանէ :

Մտնու մօտ ի յարջայն երկիր պահանէ ,

(1) Ձեռ. մէջ՝ Ֆարմանն. (2) Ձեռ. մէջ՝ զգաւա :

Տեսնու թէ ի՞նչ ինքն կամաւ հարցանէ ,
 Զի՞նչ թաղաւորն ի նա պատասխան առնէ ,
 Նա ինք քաղցր ճուղակ ամենուն ցուցանէ :

Ասէ՛ թէ՛ գիտա՛կ իս սպանման Փօլատին ,
 Ասա՛ ինձ մէկ ըզքո ծածուկն սրտին :
 Ասաց՛ Նա զիս կ'որսար ի մէջ գիշերին ,
 Որպէս նա ինձ կամէր նայ իւր հասուցին :

(fol.63vo.) Ասէ՛ Զնա ո՞նց տեսար որ զքեզ ի հար
 գար .

Ասէ՛ Դուռն էր թագել եւ ինձ կու մընայր .
 Ասէ՛ Զըրեհ ունէ՛ր հանց որ դու տեսար .
 Ասէ՛ Զըրեհ սըլեհ թուր էր եւ դանճար :

Ասէ՛ պատրաստ կացիր ի յիւ հեծելէն ,
 Որ գաղտ ի գիշերի քեզ ի հանեն քէն .
 Ի դուրս մի՛ ելաներ անքնկեր կամ մէն ,
 Խորի՛ն թէ մնա՛ք հաննէք ըզնա արեւէն :

Յոլով շատ սէր ունէր հետ մանկանն արքայն ,
 Զկամէր որ չար գործէն(1) նըմա սպանման .
 Ասէ՛ Գտրի՛ճ աղէկ , Յարմանի Ասման ,
 Կամիմ տալ քեզ խըրատ թէ լինիս հաւան :

Ասէ՛ Զինչ որ կամիս հրամանն քո է ,
 Ես եմ դարեպ անտէր օտար աշխարհէ .
 Ասէ՛ Ազգին Պարիք նա գլխաւոր է .
 Առիւծ եւ քաջ մանկտիք նորա հնազանդէ :

Դու իմ պրտիս համար երկաթ ու դանտ մո՛ւա ,
 Որ հակընդի սրտերն եւ գտնայ օգուտ .
 Ղըրկեմ շատ պահապանք զի տեղն է առուտ .
 Պահեմ ըզքեզ ի բանտ դարձեալ հանեմ շուտ :

(fol.64) Հաւան եղև մանուկն զինչ որ հրամեց
 նա ,
 Երկաթ մընուա , ի բանտ յօժար ինքն երթայ ,
 Մանուկըն Փայլիպառ հետ նորա կենայ ,
 Անկապ եւ աներկաթ ի բանտն երթայ :

Անտեսակ էր կերպով , կարճ էր հասակով ,
 Բայց էր լեզուաւ հրեղէն եւ խօսքըն շաքով ,
 Ենէր նա ի բանտէն մութըն գիշերով ,
 Խաղար շատ մանկութիւն եւ դառնայ շուտով :

(1) Ձեռագ. մէջ՝ գործին :

Երբալ Փայլիպառ մանկանն ի գիշերի քաղաւ
 անգամ եւ մարտաւորեալք քաղաւ՝ քան զոր-
 ծեհ , եւ մարդ չի մահայէր կամ ըմբռեհր զնա
 ի հաղափաղեացն , զորս կամիւ սակաւիկ պաւ-
 ռեղ ձեզ զոր գիշենայք ստոյյս :

Յառաջ պատմեմ թէ ի՞նչ ունէր նա հուռար ,
 Թէ քանի՛ ցեղ արեւստ ի մօտ ի նա կար ,
 Ապա դառնամ պատմեմ նա ի՞նչ իրք արար
 ի հետ այն հեծելին որ կոչի լաչքար :

Ելնէ նա ի բանտէն գիշերով կամկար ,
 Փոխէ զկերպն եւ երթայ ուր հեծելըն կար ,
 Մըտնու ի մէջ զօրացըն նա գաղտնաբար (fol.
 64 vo)

Անու զգապըն եւ փախչի յարագ եւ ճարտար :

Զտեսին թէ ինքն ո՞վ է կամ ընդ ո՞ր տարաւ ,
 Կամ մարդ ի այն զօրացն իւրերն հասա՞ւ .
 Գրնաց զի՛ մի հեռու ի պարիսպն ելաւ ,
 Զարնէր զգապըն որ ձայն հեծելըն հասաւ :

Ելնէն հեծելըն ամէն փուռ սըլեհով սար ,
 Երթան ի հետ ձայնին դէպ ի նա ի հար .
 Իջնու եւ դայ այն տեղն ուր հեծելըն կայր ,
 Պատռէ եւ գնայ ի բանտն ոտիւքն ճարտար :

Կենայ օր մի քանի եւ հետ մի այլ դայ ,
 Լինայ խիտ քաղցրածայն մուր տիպուն չիվայ
 Ելնէ նըստի ի բարձր տեղաց մի վերայ ,
 Ասէ՛ քաղցր ձայնիւ փարսի խափտայ :

Երթան բազումք առ ինք անդր ժողովին ,
 Լըսեն ըզձայն երգոյն եւ զեղանակին .
 « Առնունք տանինք , սանն , մեր գլխաւորին ,
 Նորա ուրախանալ հետ քաղցրածայնին : »

Երթայ ուրախութեամբ եւ յօժար սրտին ,
 Զի էր գլխաւորն ընկեր միծին Փօլատին .
 Երթայ ուրախ(fol.65)խաջիւ անդ զով որ կային .
 Մինչ տալ նորա խալիաթ եւ իրք մեծագին :

Երբ ժամ եղև նոցա որ ի լուսն մըտին ,
 Երթալ ի տուն նորա հրաման հանց արեւին(1) .

(1) Ձեռ. մէջ՝ արվին .

Նա աղաչէր 'ւ ասէր' Տեղ տու՛ք դարբային .
Զուռնիմ ալ տեղ դնալու ըստ քո հրամանին :

Ասէ՛ Այս գիշերին դու առ մեզ կացիր(1) ,
Ննջէ՛ անուշ ի քուն մինչ լոյսին ծագէ .
Վաղիւն ալ մինք նըստիմք ի սէր 'ւ ի գինի(2) .
Որ ալ քեզ մեծամեծ դալիաթ պարգեւի :

Ելնէ երբ գիտացաւ որ ի քուն մըտին ,
Առնու թուր մի անգին գինչ ալ սրկնի ,
Ակամբ դոսկի դօտին որ մըթանն լոյս տան ,
Առնու թէ՛զ եւ դառնայ որ նոքա՝ չիմանան :

Տանի պահէ հանց տեղ չուտով եւ դառնայ ,
Որ ոչ որ կենդանի գուժան չուենայ .
Ելնէ նա երեսնայ բանտին թէ՛զ երթայ ,
Մըտնու գաղտուկ ի բանտ փարման ի քուն կայ :

Վաղիւն զկերպն փոխէ նըման հաքիմի ,
Երթայ ի մէջ (fol. 65vo) քաղքին սրբա՛ մի նըստի ,
Ասէ թէ՛՝ Ես գիտուն ուսմալ եմ յայտնի ,
Զինչ իմաստութեան բան առ իս(3) գտանի :

Ի ծուռ դային հաւսար դինչ որ հեծել կար ,
Խընդրէին զըտանել զմանուկն անդադար .
Եկին տեսին հաքիմ , ճանչնալ ճար չի կար .
Հաքիմ եւ ըռամալ գիտութեամբ ճարտար :

Ասել զլիաւորին առ ինք կոչէ զնա .
Միթէ՛ զոր ինչ տարան յայտնել(4) կարենայ .
Ելնէ մանուկն քալ՝ չուտով առ նա դայ ,
Թայտնէ ըզկամք սրտին թէ՛ Գեղ կորուստ կայ :

Այն մարդն որ զայն տարել դու ոչ գիտենաս ,
Հետ մ'ալ նա պիտի գայ գէպ ի քեզ ի տես .
Առնէ հանց քեզի դեղ որ զինքն չի ճանչնալ :
Տանի հանց իրք քէնէ որ շատ աւաղեալ(5)

Ասէ՛ Իմաստուն ես , խելօք եւ գիտանակ ,
Զկարե՛ս առնել հընար կամ դեղ եւ ճարակ ,
Ոնց ես ըզնա տեսնու՛մ ճանաչեմ մէջնակ ,
Որ ես մաշեմ ըզնա ի օուր 'ւ ի դանակ :

Ասէ՛ Զնա մարդ չի (fol. 66) ճանչնայ քան ես
ըզմէն ,

Ու ոչ հետ մարդ նորա կամի հանել քէն .
Փոխեմ զկերպս եւ հազնիմ գինւորութեան զէն ,
Կանգնեմ ի դէմ դըռան եւ զնա որսամ մէն :

Արար որպէս ասաց եւ նա հաւատաց .
Մինչեւ գիշեր եղեւ նա ի դուռն եկաց .
Յորժամ ետես զամէշըն հաւսար պառկած ,,
Ապա գայ մըտանէ երբ ի քուն գիտաց :

Տեսնու գինքն եւ զխաթունն որ ի խոր քընին ,
Նայ դեղ տայ թմուրթեան որ թէ՛զ չի զարթին .
Առնու գինչ ոսկեղէն իրք որ հանդիպին ,
Տանի պահէ երթայ ինք թէ՛զ ի բանտին :

(Շարունակելի)

ԶԵՌՔԵՐ

Ձեոխ' , շոյեցիք մակաւս որ կ'այրի :
Մեղրամուրի պես ձեոխ' որ առաւ
Արցունք կը սրբիք : Սուրբերու բարի
Ձեոխ' , արծաթե մասունք , անարաւ :

Ո՛վ քրտնած ձեոխ' քոփախստի՛
Անկողնէն կախուած , ա՛յ խոնջ ու վրհաս :
Աղօթի պահուն , ժեպով մը վայրի
Կարկառուն ձեոխ' , հայցո՞ղ անընդհաւ :

Սիրիս վրայ ձեոխ' . երա՞գ ուրուագիծ :
Ձեոխ' սիրունւոյ , ծաղիկներ գրկիմ՝
Դեռ սիրոյ քափուած արցունքներով քաց :

Հաւերուած ձեոխ' զիրգ , ու մեղապից ,
Որ խալ կը հանկ : Ո՛վ քերքուած զոռին :
Ձեոխ' , քրտնեցիք ձեոխ'ու՝ որ կ'այրի :
ՎԱՀԱՆ ՄԱԼԻ ԶԵԱՆ

(1) Ձեո. մէջ՝ մեզ առ կայիր . (2) Ձեո. մէջ՝ գի :
(3) Ձեո. մէջ՝ առ ի : (4) Ձեո. մէջ՝ այսնել .
(5) Ձեո. մէջ՝ աւաղիս :

